Հավելված N 11
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 14-ի N 1681 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՎԱՅՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպման ենթակա ԱՏԳ ԱԱ 93 ապրանքային խմբում ընդգրկված ապրանքների ոչնչացման հնարավորության, վայրի և եղանակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից եզրակացության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Եզրակացություն ստանալու համար հայտարարատուն լիազոր մարմին է ներկայացնում գրավոր դիմում, որը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

1) իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման համարը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև դիմումատուի գրանցման և գործունեության իրականացման վայրերի հասցեները.

2) ապրանքի անվանումը.

3) արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (ԱՏԳ ԱԱ) համապատասխան ապրանքի ծածկագիրը.

4) ապրանքի քանակը, ծավալը, արժեքը.

5) ապրանքի նկարագիրը (բնութագրիչներ).

6) ապրանքի վտանգավոր հատկությունները (թունավոր, հրդեհավտանգ, պայթյունավտանգ, կոռոզիոն և այլն).

7) ապրանքի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներկրելու հիմքերը (հիմք հանդիսացող բոլոր փաստաթղթերի՝ ներառյալ ներմուծման լիցենզիայի պատճենը).

8) ոչնչացում իրականացնող կազմակերպության անվանումը, վերջինիս հետ կնքված պայմանագրի պատճենը.

9) ապրանքի՝ «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով հայտարարագրման համար հիմք ծառայած պատճառը:

3. Դիմումատուն եզրակացություն ստանալու համար անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը կարող է ներկայացնել լիազոր մարմին միայն առձեռն եղանակով:

4. Սույն կարգի 2-րդ կետով պահանջվող տեղեկությունները թերի ներկայացված լինելու կամ վրիպակների կամ անճշտությունների առկայության դեպքում լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է դիմումատուին: Դիմումատուն կարող է 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել փաստաթղթերում առկա թերությունները և լրամշակված փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմին: Փաստաթղթերում թերությունների բացակայության դեպքում լիազոր մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է եզրակացություն՝ ապրանքների ոչնչացման հնարավորության, վայրի և եղանակի վերաբերյալ, իսկ հանրապետությունում այդ ապրանքների անվտանգ եղանակով ոչնչացման համապատասխան վայրի և իրականացնող կազմակերպության բացակայության դեպքում՝ ապրանքների ոչնչացում իրականացնելու անհնարինության վերաբերյալ՝ նշելով պատճառը:

5. Եզրակացությունը կարող է տրվել միայն թղթային տեսքով:

6. Եզրակացության տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

1) չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը.

2) ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները նշված ժամկետում չեն շտկվել, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ:

7. Լիազոր մարմնում դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում որոշվում է ապրանքի ոչնչացման հնարավորությունը, վայրը և եղանակը՝ հաշվի առնելով անվտանգությունն ու շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

8. Եզրակացություն տրամադրելու համար լիազոր մարմինը կարող է դիմել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերական կոմիտեին՝ ռազմարդյունաբերական ոլորտում գործող կազմակերպություններից տվյալ ապրանքի ոչնչացման հնարավորություն ունեցող հավանական կազմակերպության (կազմակերպությունների) վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

9. Եզրակացություն տրամադրելիս հիմք է ընդունվում դիմողի և ոչնչացում իրականացնող կազմակերպության միջև կնքված պայմանագիրը, իսկ ոչնչացում իրականացնող կազմակերպության բացակայության (ոչնչացում իրականացնելու անհնարինության) դեպքում՝ ոչնչացումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համապատասխան ստորաբաժանումների միջոցով իրականացնելու վերաբերյալ համապատասխան հիմքերի առկայությունը:

10. Եզրակացություն ստանալու համար դիմումը կից փաստաթղթերով լիազոր մարմին մուտքագրվելու պահից մինչև եզրակացության տրամադրումը կարող է տևել ոչ ավելի, քան 20 աշխատանքային օր: Ընդ որում, սույն կարգի 8-րդ կետով սահմանված տեղեկատվության տրամադրման համար նախատեսված ժամկետները չեն հաշվարկվում և ներառվում սույն կետով սահմանված ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ